«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՀԱՐՈՂ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ /ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/

Ձեռնարկող՝
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐ 6

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ 8

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ) 10

4.1 Գոյություն ունեցող իրավիճակը 10

4.2 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ 12

4.3 Ոռոգում 21

4.4 Էլեկտրամատակարարում 22

4.5 Կանաչապատում և բարեկարգում 22

4.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 24

5 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ 25

5.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները 25

5.2 Կլիմա 25

5.3 Տարածքի սեյսմիկ բնութագիրը 27

5.4 Մթնոլորտային օդ 28

5.5 Ջրային ռեսուրսներ 32

5.6 Հողային ռեսուրսներ 34

5.7 Կենսաբազմազանություն 34

5.8.1 Բուսական աշխարհ 34

5.8.2. Կենդանական աշխարհ 35

5.8.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ 35

5.8 Պատմության և մշակութային հուշարձաններ 35

5.9 Սոցիալ տնտեսական պայմանները 42

6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 43

6.1 Ռիսկերի գնահատում 43

6.2 Օդի աղտոտում 43

6.3 Հողերի Աղտոտում 44

6.4 Աղմուկի և թրթռումների ազդեցություն 45

6.5 Արտակարգ իրավիճակներ. 46

6.6 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն 47

6.7 Կենսաբազմազանություն 48

6.8 Թափոններ 48

6.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն 49

6.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ 51

6.11 Սոցիալական ազդեցություններ 52

6.12 Լանդշաֆտ 52
6.13 Բարեկարգում և Կանաչապատում. 53
7 ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ/ՊԼԱՆ 53
8 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 54
9 ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ 58
10 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 61
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 62
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 65
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ 67
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 16.09.22 ԹՎԱԿԱՆԻ 6-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /ՔԱՂՎԱԾՔ/ 70
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 73
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 74

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող գործունեություն	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի վերակառուցում
Նպատակը	Բակային տարածքի վերակառուցում
Ձեռնարկող	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
Ձեռնարկողի հասցե	ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան փողոց 1
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ. +374 60 71 01 14 ; +374 44 01 01 00 Դավիթ Կարախանյան Էլ. Փոստ: davkarakhanyan@gmail.com
Վերակառուցվող տարածքի գտնվելու վայրը	Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջանի, Ալեք Մանուկյան փողոց 1 հասցե
Վերակառուցվող հողամասի ընդհանուր մակերեսը	8281.0 քմ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց 1: Գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց 1 հասցե: «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը նախատեսում է նշված հասցեում իրականացնել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի վերակառուցում:

Նշված գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի հոդված 14, կետ 8-ի այն է՝ փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ մասում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է **«Բ» կատեգորիայի** ընթացակարգով:

Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում:

Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- Շինարարության փուլում բնակչությանը պատճառվող անհանգստություններն՝ պայմանավորված մեքենաների և տեխնիկայի տեղաշարժով,
- Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանումները,
- Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Նախնական գնահատման հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը,
- Նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- Տարածքի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- Շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներն ու քննարկումները:
- Ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 01/18-07/2-128946-1020, տրված 21.11.2022թ., (Հավելված 2)
- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները (Հավելված 3):
- ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտամեթոդական խորհրդի 16.09.2022 թվականի 6-րդ նիստի արձանագրության քաղվածք (Հավելված 4):

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպում և իրականացում,
- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐ

Նախատեսվող գործունեության նախագծման և շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանությանը, այդ օրենսդրությունից բխող ՀՀ կառավարության որոշումներով: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ Հողային օրենսգիրք (02.05.2001թ.)
3. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.06.2002թ.)
4. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (28.11.2011 թ.)

5. Թափոնների մասին ՀՀ օրենք (24.11.2004 թ.)
6. Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենք (07.02.2012թ.)
7. Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (01.11.1994թ.)
8. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (21.06.2014թ):
9. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին ՀՀ օրենք (11.11.1998 թ. ՀՕ 261):
10. ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին ՀՀ օրենք (11.04.2003թ.)
11. ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (15.03.2007թ. N 385-Ն, հավելված N1),
12. ՀՀ Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման (07.10.2004թ. N 1616-Ն),
13. ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշում “Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին”:
14. ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրաման «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Սենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին:
15. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի թիվ 79-Ն հրաման ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարաի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
16. ՀՀ կառավարության 20 ապրիլի 2002 թվականի N 438 որոշումը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնմանև օգտագործման կարգը հաստատելու մասին»:
17. ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրաման «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Սենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին:
18. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
19. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
20. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
21. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

22. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,
23. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,
24. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,
25. ՀՀ կառավարության 08.09.2011 թվականի N 1396-Ն որոշումը Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 19.09.2002 թվականի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 12.04.2001 թվականի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
26. ՀՀ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012 թվականի N 405-Ն որոշումը Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին:

Հայաստանի հանրապետությունը վավերացրել է նաև մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ, որոնք հասանելի են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կայքում՝ http://www.env.am: Դրանց շարքում է նաև ՄԱԿ-ի ԵՏՀ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին, հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիան (Օրհուս, 1998թ.):

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը:

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջանի, Ալեք Մանուկյան 1 հասցեում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի վերակառուցում:

Տարածքը սեփականության իրավունքով պատկանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին (Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները ներկայացված են **Հավելված 3-ում**): Տարածքի մակերեսը կազմում է 5,983152 հա: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության է, իսկ օգտագործման նպատակը պետական համալսարանի շենք ու շինությունների սպասարկում:

Նկար 1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի իրավիճակային հատակագիծ



4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

4.1 Գոյություն ունեցող իրավիճակը

Երևանի պետական համալսարանի ընդհանուր տարածքը կազմում է 59՛866.23 քմ, որից 8՛281 քմ զբաղեցնում է գլխավոր մասնաշենքի կենտրոնական մուտքի բակային տարածքը: Այժմ ԵՊՀ ընհանուր տարածքի ջրաթափանց (այդ թվում կանաչապատ) տարածքի մակերեսը կազմում է 12՛174 քմ:

Երևանի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքի կենտրոնական մուտքի բակային մասը հանդիսանում է Երևանի պետական համալսարանի հիմնական հանրային տարածքը: Այս հատվածամասում են լինում հիմնական մարդկային կուտակումներն ու հոսքերը: 1970-ականներին ձևավորված ասֆալտապատ հրապարակի մի մասը օգտագործվում է որպես ուսանողների հավաքատեղի:

Բակային տարածքը զբաղեցնում է 8՛281 քմ տարածք: Ներկայումս դրա ոչ ջրաթափանց մակերեսը (ասֆալտապատ՝ 3՛118 քմ, սալիկապատ՝ 344 քմ,ջրավազն՝ 225 քմ) կազմում է 3՛687 քմ, իսկ ջրաթափանց (կանաչապատ) տարածքները՝ 3՛822 քմ, այլ տարածքները (մուտքեր, աստիճաններ և այլն) կազմում են ՝ 772 քմ:

Կանաչ տարածքները բաժանված են մնացած տարածքներից եզրաքարերով ինչպես նաև թփերով, որի պատճառով այդ տարածքները չեն օգտգագործվում ուսանողների կողմից:

Տարածքում կատարված ուսումնասիրության արդյունքում գույքագրվել են հետևյալ ծառերը՝

Անվանում	Քանակ
Բարդի	33
Կեչի	2
Ուռենի	7
Եղևնի արծաթափայլ	1
Նոճի մշտադալար	12
Հացենի	3
Կելրեյթերիա հուրանավոր	12
Ձիակասկ	21
Ալբիցիա	2

Կաղնի սմառային	10
Սիրիական վարդ	7
Հուդայածառ	9
Մետեսեկվոյա	3
Բալենի	2
Ֆորզիցիա	1
Ընկուզենի	1
Թթենի	2
Արքայանարինջ	2
Խնձորենի	2
Ծիրանենի	13
Դրախտածառ	2
Թխկի սպիտակ	9
Նոճի մշտադալար	2
Լորենի	2
Թեղի	30
Հաղարջ	1

Համալսարանի բակային տարածքի կենտրոնական հատվածում առկա է 20մ x 15մ չափերի ջրավազան, որը շահագործվում է ապրիլ-սեպտեմբերի ամիսներին, որի հիմնական ընթացքում համալսարանում դասեր չկան։

Երևանի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքը (ճարտարապետ՝ Էդմոն Տիգրանյան) կառուցված 1965 թվականին հանդիսանում է հանրապետական նշանակության հուշարձան (Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ՝ 1.6.90)։ Բակային տարածքում առկա են թվով երեք արձաններ՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի արձանախումբ, Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու արձաններից։ Մովսես Խորենացու արձանը (քանդակագործ՝ Ա. Պողոսյան), տեղադրել է 1996 թվականին և հանդիսանում է տեղական նշանակության հուշարձան (նույն տեղում՝ 1.6.90.5)։

4.2 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Բակային տարածքի վերակառուցումը նպատակ ունի ընդլայնել ժամանցային բաց տարածքները: Ուստի առաջարկվում է հիմնական հատվածում ստեղծել մեծ սալարկված հրապարակ, իսկ կանաչապատ տարածքներում, օգտագործելով սաղարթաշատ ծառերի ստվերային հատվածները, նախատեսել ավազեպատ ջրաթափանց մակերեսներ: Այս տարածքների նման օգտագործումը թույլ կտա ստեղծել ուսանողների համար խմբային հավաքատեղիներ և դասերին պատրաստվել բացօթյա միջավայր: Ուսանողների հավաքների համար ավազեպատ ջրաթափանց հատվածներում ստեղծվել են փայտե տախտակամածեր, որոնք կահավորվելու են տարբեր չափերի ու տիպերի փոքր ճարտարապետական ձևերով՝ սեղաններով և նստարաններով: Ընդհանուր տարածքը կահավորվելու է թվով 26 սեղաններով և նստարաններով, որոնք ապահոված են լինելու վարդակներով և սեղանի մակարեսը լուսավորող լուսատուներով:

Երևանի համայնքապետարանի նկատառումները հաշվի առնելով նախագիծը ենթարկվել է որոշակի փոփոխության՝ հնարավորինս ավելացնելով ջրաթափանց մակերեսները: Նախագծում նախատեսվում է ներկայիս անջրաթափանց հատվածը սալարկելով դարձնել 3՛691 քմ, իսկ ջրաթափանց տարածքների ներկայիս 3՛822 քմ-ը նախատեսվում է դարձնել 3՛803 քմ: Արդյունքում, ջրաթափանց տարածքների կանաչապատ մակերեսը կկազմի 2՛927 քմ, խճապատ մակերեսը՝ 876 քմ, իսկ այլ տարածքները (մուտքեր, աստիճաններ) կկազմեն 787 քմ:

Բակային տարածքի վերակառուցման արդյունքում արտացոլվելու է հետևյալ ցուցանիշները՝

- Սալարկում՝ 3՛691 քմ,
- Չոր շատրվան՝ 225 քմ,
- Ջրաթափանց մակերես՝ 3՛803 քմ,
  որում՝
    - Կանաչապատում՝ 2՛927 քմ,
    - Խճապատում՝ 876 քմ:

Նախագծով նախատեսվում է տեղափոխել միայն Անանիա Շիրակացու արձանը Մեխանիկայի ֆակուլտետի մուտքային հատվածի մոտ՝ բացահայտելու դրա ընկալման լավագույն հնարավորությունները:

Հենաշարժողական խնդիրներով անձանց համար գլխավոր մասնաշենքի մուտքի աստիճաններին կից տեղադրվել է վերելակ, որը, պերգոլաների կիրառության շնորհիվ, ծածկվելու է մագլցող բույսերով ու ծաղիկներով: Նույն տրամաբանությամբ գլխավոր մուտքի աստիճանների վրա նախատեսված են ծաղկանոցներ, որոնք հանդիսանալու են կարճաժամկետ նստատեղեր և ապահովելու են աստիճանների ավելի արդյունավետ ընդհանուր օգտագործումը:

Տարածքի համար իրականացվել է լուսավորության նախագիծ, որի հիման վրա մշակվել է նաև էլեկտրամատակարարման նախագիծ։

Էլեկտրամատակարարման սնուցումը կատարվելու է գոյություն ունեցող գլխավոր մասնաշենքի աստիճանավանդակի տակի ցածր լարման սենյակից, մաս կազմելով առկա ցանցին։ Էլեկտրական էներգիայի հաշվիչը անհրաժեշտության դեպքում տեղադրվելու է շենքի ցածր լարման սենյակի էլեկտրական վահանակում։ Էլեկտրամատակարարումը իրականացվում է 5 և 3 գծանի սխեմայով, 380/220Վ լարմամբ, 50Հց հաճախականությամբ։ Լուսավորությունը իրականացվելու է էներգախնայող ԼԵԴ լուսատուների կիրառմամբ։

Շինարարության ընթացքում նախատեսվում է առկա հողի բերրի շերտի (256.7 քմ) պահեստավորում և նույնի վերօգտագործում։ Հողի բերրի շերտի պահեստավորումն կիրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, մասնավորապես մինչ հողի բերրի շերտի ժամանակավոր պահեստավորումը՝ պահեստավորման տարածքը կնշահարվի, կմքարվեն տարածքում առկա քարերը՝ հողի բերրի շերտի հետ դրանց խառնումը կանխելու համար։ Հողի բերրի շերտի պահեստավորումը նախատեսվում է իրականացնել կույտերով, իսկ կույտերը կծածկվեն ծածկոցներով՝ հողի էրոզիան կանխելու համար։ Ներկայացված միջոցառումներից բացի կիրականացվեն նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ ևս։

Նախագծով նախատեսվել է նաև տարածքում առկա ստորգետնյա խորքային հորի շրջակայքում կառուցել ստորգետնյա ջրամբար, ինչպես նաև ոռոգման և չոր շատրվանների համար պոմպակայան։

Ա. նախապատրաստական աշխատանքներ,

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- աշխատանքների տարածքի ցանկապատում.
- գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում կամ հեռացում,
- վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անվտանգության նշանների տեղադրում,

- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Հաշվի առնելով տեղանքի պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Բ. Շինարարական հրապարակ. Բակային տարածքի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինհրապարակն ամբողջ տարածքն է:

Ըստ շինարարության կազմակերպման նախագծի և համաձայն «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Սենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով շինհրապարակում նախատեսվում է՝

- Վարչակենցաղային կամ սանիտարահիգիենիկ նշանակության շինություն 1 հատ
- Անվտանգության նշանների և ճոպանման եղանակների ցուցատախտակ 1հատ
- Բիոզուգարան՝ լվացարանով 3 հատ
- Ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ 1հատ
- Աղբամաններ
- Հակահրդեհային միջոցների վահանակ՝ 1 հատ,
- Ավտոմեքենաների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- Պահակատուն 1 հատ
- Շինարարական նյութերի, գործիքների պահեստավարման հարթակ,
- Տեղեկատվական ցուցանակ 1 հատ:

ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ



Շինհրապարակը առանձնանալու ժամանակավոր ցանկապատով, ճանապարհը փակող նշաններով, տեղադրվելու է ժամանակավոր լուսավորության համակարգ անվտանգության նորմատիվների համաձայն:

Մինչև շինարարության սկսելը շինհրապարակում կատարվելու են կոմունիկացիաների տեղադրման, միացման աշխատանքներ:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջրի պահանջարկն ապահովվելու է գոյություն ունեցող ջրագծից:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, ինչը աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու է: Բիոզուգարանների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող համակարգերից:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Արտադրական հոսքաջրերը պլաստմասե վերգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի շինհրապարակում տեղադրված պարզարան: Իսկ անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը կուղղորդվեն բակային սելավային ջրացանց, այնուհետև պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Գ. Քանդման և հողային աշխատանքներ

Շինարարության ընթացքում մշակման ենթակա գրունտերը պատկանում են IV կարգի: Գրունտերի մշակումը փոսորակում և խրամուղիներում իրականացվում է “հետ-բահ” էքսկավատորով: Մաքրամշակումը իրականացվում է ձեռքով բանվորական ուժի օգնությամբ: Բնահողի տեղափոխման համար ընտրված է ավտոինքնաթափ: Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են գրունտի փափուկ բնահողերը: Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվորական ուժի օգնությամբ՝ տեղափոխելով գրունտը սայլակներով: Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնեվմատոփիչներով:

Վերակառուցվող հատվածում հողի բերրի շերտը պահեստավորվելու է տարածքում և ամբողջովին վերօգտագործվելու է շինարարական աշխատանքների ավարտին՝ տարածքի կանաչապատ հատվածների բարեկարգման աշխատանքներում: Հողի բերրի շերտի հանումը,

պահեստավորումն ու հետագա օգտագործումն իրականացվելու է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Նախատեսվում է իրականացնել նաև գոյություն ունեցող որոշ աստիճանների, հենապատերի, մայթի և ասֆալտբետոնե ծածկույթի քանդում: Շինարարական աշխատանքների ընթացքում քանդված ասֆալտ բետոնե ծածկույթը նախատեսվում է տրամադրել ասֆալտի արատադրությամբ զբաղվող ընկերություններին հետագա վերամշակման և վերօգտագործման համար:

Այս և հետագայում բերվող ցուցանիշները նախնական են և վերջնական նախագծում կարող են փոփոխվել, բայց ոչ էական:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվող գրունտների ընդհանուր ծավալը մոտավորապես կկազմի 993,4 խմ, որից հետլիցքի համար նախատեսվում է օգտագործել 628.37 խմ, իսկ հետլիցքի համար չօգտագործված հողային գրունտների մնացած մասը՝ 365.04 խմ ծավալով, ինչպես նաև շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող խառը շինարարական աղբը, որը կազմված է լինելու գոյություն ունեցող ա/բետոնե ծածկույթի քանդումից - 3056 մ^2, Բազալտե աստիճանների քանդումից - 134.80 գծ.մ կամ 54.0 մ^3, Բազալտե 30x15 եզրաքարի քանդումից -1221 գծ.մ կամ 55.0 մ^3 և Հենապատերի բետոնի քանդումից - 100.24 մ^3 առաջացած և վերօգտագործման համար ոչ պիտանի նյութերից նախատեսվում է տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված/հատկացված վայր (Հավելված 5):

Դ. Շինարարական աշխատանքներ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի վերակառուցման աշխատանքները ներառում են՝

- Շին. հրապարակի ցանկապատումը/մեկուսացում և անհրաժեշտ շինությունների տեղադրումը,
- Հողային աշխատանքների իրականացում,
- Բետոնային աշխատանքների իրականացում,
- Հիմքի ջրամեկուսացման աշխատանքների իրականացում
- Քանդված ավելցուկային գրունտների տեղափոխում հատկացված վայրեր,
- Գոյություն ունեցող սիզամարգի հարթեցում,
- Գոյություն ունեցող բազալտե աստիճանների, քանդում, պահեստավորում հետագա վերօգտագործման համար
- Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, դրանք կվարձակալվեն այլ կազմակերպություններից:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են հետևյալ մեքենա-մեխանիզմներով.

Աղյուսակ 1

N	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Ավտոկռունկ	КС-45717К-1 ИВАНОВЕЦ	1
2	Էքսկավատոր՝	JSB 3X	1
3	Ավտոբեռնիչ	ЭО 2621	1
4	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	1
5	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	2
6	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	3
7	Փոխարկիչ թրթռիչների համար	ИВ-4	2
8	Տոփանիչներ պնևմո ձեռքի		3
9	Հետահար մուրճ	Makita	2
10	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
11	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
12	Ավտոբետոնախառնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի

Ապրանքային բետոնը շին. հրապարակ է կբերվի պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գործող ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվելու են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին:

Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ արտադրական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փոռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Գործունեության վայր շինտեխնիկան և ավտոմեքենաները մոտենալու են գոյություն ունեցող ճանապարհով: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և սպասարկումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի, ինչպես նաև պետական այլ կառույցների կողմից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ բնավորների համար նախատեսված տնակում:

Միաժամանակ աշխատողների թիվը շինարարության տարբեր փուլերում կլինի առավելագույնը 34 մարդ, այդ թվում՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 4 մարդ,
- Արհեստագործներ, բանվորներ, մեքենավարներ և օգնականներ - 30 մարդ,

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 6 ամիս կամ 180 օր է՝ շինարարական մեկնարկից: Շինարարության տևողությունը հաշվարկված է ըստ ՇՆ և Կ 1.04.03-85 «Շինարարության տևողության նորմեր» և ՍՆԻՊ 1.04.03.2008-ի նորմերին համապատասխան:

Աղյուսակ 2

ԵՊՀ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ	ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	ԱՇԽԱՏԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ Ս-ՕՐ	ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԹԻՎԸ	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ,ՕՐ	I տարի																												
						ԱՄԻՍՆԵՐ																											
						I					II					III					IV					V					VI			
						6	12	18	24	30	36	42	48	54	60	66	72	78	84	90	96	102	108	114	120	126	132	138	144	150	156	162	168	174	180
1	2	3	4	5	6	7																													
		ՈՒՂՂԱՁԻԳ ՀԱՄԱՀԱՐԹՈՒՄ																																	
1	ՀԱԾԿԱՐԿ 1	ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐ, ՍԻՉԱՄԱՐԳԵՐ	144.0	4.0	36.0				4																						4				
2	ՀԱԾԿԱՐԿ 2	ՀԵՆԱՊԱՏԵՐ 1-3, ԱՍՏԻՃԱՆՆԵՐ	180.0	6.0	30.0					6																									
3	ՀԱԾԿԱՐԿ 3	ՀԵՆԱՊԱՏԵՐ 4-5, ԱՍՏԻՃԱՆ 1	96.0	4.0	24.0								4																						
4	ՀԱԾԿԱՐԿ 4	Ա/Բ ԾԱԾԿԻ ՔԱՆԴՈՒՄ, ՄԱՅԹԻ ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ,	540.0	6.0	90.0																				6										
5	ՀԱԾԿԱՐԿ 5	ՄԱՅԹԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՎ ՀԵՆԱՊԱՏԵՐ	36.0	3.0	12.0																						6								
6	ՀԱԾԿԱՐԿ 6	ԵԶՐԱՅԻՆ ՀԵՆԱՊԱՏԵՐ, ՆՍՏԱՐԱՆ ՀԵՆԱՊԱՏԵՐ	180.0	6.0	30.0													6																	
		ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ																																	
7		ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ԿՈՅՈՒՂԻ, ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑ, ՊՈՍՊԱԿԱՅԱՆՆԵՐ, ՋՐԱՄԲԱՐՄԵՐ	1 200.0	10.0	120.0																						10								
		ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	0.0																																
8		ՄԱԼՈՒԽՆԵՐ, ՎԱՀԱՆԱԿՆԵՐ, ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐ	540.0	6.0	90.0																			6											
9		ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ, ԷՔՍՏԵՐՅԵՐ, ՎԵՐԵԼԱԿ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	720.0	6	120																		6												
10		ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ	540.0	6	90																		6												
11		**Ընդամենը**	**4 176.0**																																

Բանվորների առավելագույն քանակը 34 մարդ

1

4.3 Ոռոգում

Այգու կանաչապատ տարածքների, ծառերի ու սիզամարգերի ջրումը իրականացվում է ոռոգման համակարգի միջոցով: Որպես հիմնական ջրաղբյուր ծառայում է գործող ոռոգման ջրագիծը, որը սնվում է տարածքում առկա արտեզյան հորից: Անհրաժեշտ ճնշում և ջրաքանակ ապահովելու համար նախատեսված է ոռոգման ջրի ստորգետնյա պոմպակայան և ջրամբար 27 խմ ծավալով:

Ջրամբարի ծավալը որոշելիս հաշվի է առնվել, որ ջրման ընթացքում այն լցվում է d=50մմ խողովակով: Ջրումը իրականացվում է ավտոմատ գործող սուզվող ցայտիչներով: Ջրման ենթակա տարածքը բաժանված է տեղամասերի: Ջրման տեղամասերը իրարից առանձնանում են փականների միջոցով: Ոռոգման պոմպերի արտադրողականությունը ընտրված է ամենամեծ տարածքի համար անհրաժեշտ ջրի քանակից ելնելով: Ջրման հաշվային համարվող II տեղամասի ջրածախսը՝ q=9.27լ/վրկ:

Պահանջվող ճնշումը՝ H=H/երկ +h/ազ.+h/դ= (1011.5-1008.7)+20+16.9=39.70մ: Ոռոգման ցանցը փակուղային է և տեղադրվում է գետնի մակերևույթից 0.3մ խորության վրա, իսկ ճանապարհների տակ՝ 1.0 մ խորությամբ:

Ոռոգման ցանցը իրականացվում է պլաստմասե խողովակներով:

Ստորգետնյա ե/բ ջրամբարում կուտակվում է մեկ և կես օրվա ոռոգման ջրաքանակ:

Ջրամբարը ծառայում է նաև շատրվանների շրջապտուտային ջրամատակարարումը ապահովելու համար:

Ոռոգման համակարգը ջրարբիացման սեզոնը վերջանալուց հետո դատարկվում է կամ ցածրադիր մասերում տեղադրված ծորակներով ու ցայտիչներով, կամ առանձին թողարկներով, որոնք տեղադրված են ցանցի ցածր կետերում:

ՇԱՏՐՎԱՆԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Շատրվանի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել տարածքում գոյություն ունեցող ոռոգման ջրագծից/ցանցից (որին միանալու համար համապատասխան պետական մարմնից ձեռք կբերվի համաձայնություն/թույլտվություն և ըստ անհրաժեշտության տեխնիկական պայման), իսկ տարածքում առկա խորքային հորը (որի համար 2009 թվականին ստացվել է ջրօգտագործման թույլտվություն և որի ժամկետը 19.03.2012 թվականին լրանալուց հետո չի երկարաձգվել) Երևանի պետական համալսարան հիմնադրամը չի պատրաստվում այն երկարաձգել կամ տվյալ խորքային հորի համար ստանալ նոր ջրօգտագործման թույլտվություն և այն օգտագործել/շահագործել:

Ջրի շրջապտույտը և համակարգի դատարկումը իրականացնելու համար նախատեսված է ստորգետնյա ե/բ ջրամաբար: Ընդունված է ջրի շրջապտուտային սխեմա պոմպակայանում տեղադրված պոմպի միջոցով: Շատրվանը սնող, շրջապտուտային, արտաթող և դատարկող խողովակները մոնտաժվում են պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներով: Բոլոր խողովակները և մետաղական մասերը ներկվում են հակակոռոզիոն ներկով:

Անձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/

Տարածքի մակերևութային ջրերի մի մասի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով:

Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և կմիացվեն գործող քաղաքային հեղեղատար ցանցին:

4.4 Էլեկտրամատակարարում

Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում կապահովվի քաղաքային էլ. ցանցի ենթակայանից:

4.5 Կանաչապատում և բարեկարգում

Նախագծով նախատեսված է իրականացնել բակային տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ: Ջրաթափանց տարածքների մակերեսը նախատեսվում է դարձնել 3՛803 քմ, որից 2՛927 քմ կանաչապատ տարածք և 876 քմ խճապատ մակերես: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել արդեն իսկ պահեստավորված հողի բերրի շերտի ՝ 256.7 խմ: Հողի բերրի շերտի տեղափոխումը, պահեստավորումն ու հետագա օգտագործումն կիրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 08.09.2011 թվականի N 1396-Ն որոշմամբ նախատեսված Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 19.09.2002 թվականի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 12.04.2001 թվականի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: Կանաչապատումը կիրականացվի համաձայն կանաչապատման հատակագծի և սխեմայի, ինչպես նաև ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման համապատասխան:

Նախագծման առաջին փուլում իրականացվել է տարածքում առկա ծառերի գույքագրում՝ համապատասխան մասնագետի կողմից, որի արդյունքում ի հայտ են բերվել հիվանդ կամ վտանգավոր ծառերը: Այսպիսով՝ հատման ենթակա ծառերի թիվը կազմում է 18 հատ, իսկ նախագծով ավելացվող ծառերի քանակը կազմում է՝ 32 հատ: Նախագծվող տարածքում ծառաշատ զանգվածը մեծացնելով՝ նախատեսվում է դրանց ստվերում գտնվող ու հետևաբար

էլ ավելի խնամք ու ոռոգում պահանջող խոտածածկի կրճատում, ջրաթափանց արահետների ու փայտյա նստարաններով տախտակամածերի կիրառմամբ: Այսպիսով՝

- ջրաթափանց մակերեսը գրեթե մնում է անփոփոխ՝ ապահովելով ծառերին անհրաժեշտ ջրաքանակով թե բնական, թե տեղային ոռոգման եղանակով,
- բոլոր ծառերի շուրջ թողնելով կղզյակային ստվերատար սիզամարգ՝ ապահովել կանաչ գոտու պատմական հիշողությունը
- խճապատ ջրաթափանց արահետների ու տախտակամածերի առկայությամբ օգտագործել բակային ստվերաշատ զանգվածը՝ ուսանողների ժամանցի ու ռեկրեացիայի նպատակով:

Հիմք ընդունելով մասնագետների կողմից կատարված գոյություն ունեցող ծառերի ուսումնասիրությունն ու վնասված ծառատեսակների գույքագրումը՝ առաջարկվում է պահպանել բոլոր առողջ ծառերը՝ հաշվի անելով մի շարք լրացումներ: Վնասված ծառերի փոխարեն նախատեսվում է տնկել նոր ծառատեսակներ, որոնց ընտրությունը կատարվել է հաշվի առնելով ծաղկման շրջանը, սաղարթի գույնը, բույսի չափերն ու տեղադիրքը: Նման մոտեցումը թույլ կտա ապահովել նաև տարածքի գեղարվեստական ընկալումը: Վերակառուցման արդյունքում ծառերի ընդհանուր քանակն ավելանալու է:

Գոյություն ունեցող ծառերին վերակառուցման արդյունքում ավելանալու են հետևյալ ծառատեսակները և բույսերը՝

Անվանում	**Քանակ**
Կեչի	3
Ուռենի	1
Եղևնի արծաթափայլ	1
Եղևնի գնդաձև	1
Կանաչ գաճաճ եղևանի	1
Բալենի	1
Ֆորզիցիա	4
Խնձորենի	1
Ծիրանենի	1

Դրախտածառ	1
Սոսի արևելյան	1
Սոճի լեռնային մոփս	1
Սոճի սովորական	1
Կատալպա	4
Փշատենի	1
Ասպիրակ	1
Սակուրա ճապոնական	1
Գիհի վիրգինյան	1
Գիհի «Old Gold»	1
Գիհի փռվող	1
Գիհի ղազախական	3
Գիհի ցածրաճ	1
Բալզամին	260
Բաղեղ	55
Կուսախաղող եռածայր վիչի	25

4.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Վերակառուցման աշխատանքների ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր այդ թվում՝ բնական ներմուծված փայտ, մետաղական խողովակներ և թիթեղներ, երկաթբետոն և խրամաբետուն, բետոնե տոմետ, տարբեր տրամաչափի խիճ, ավազ ճեմուղիների համար, գրանիտե սալիկներ, բնական բազալտե սալիկներ, բնական Անիի տուֆ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, ինչպես նաև աշխատողների կենցաղային կարիքների համար: Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն՝ գոյություն ունեցող ջրատարից, որը կմիացվի քաղաքային ջրամատակարարման ցանցին: Իսկ կոյուղին կմիացվի քաղաքային կոյուղատարին:

Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում կապահովվի քաղաքային էլ. ցանցի ենթակայանից:

5 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը գտնվում է ՀՀ Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջանի,Ալեք Մանուկյան 1 հասցեում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս արևմտյան եզրամասային հատվածում, որտեղ ռելիեֆը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք անկումով ունի մեղմ թեքություն:

5.2 Կլիմա

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 24.5˚C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 49%, լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -2.9 ˚C է:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5–12^{0}C: Բացառձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 21 ^{0}C, բացառձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ + 41 ^{0}C:

Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Քամու առավելագույն արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը՝70կգ/մ^2 է: Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 60 սմ է:

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Նհրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն” ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից:

Ստորև բերված աղյուսակներով ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները, որոնք պետք է հաշվառվեն նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում:

Աղյուսակ 3. Օդի ջերմաստիճանը, ºC

Բնակավայրի անվանումը		Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
			I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան «Արաբկիր»		1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 4. Օդի խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Երևան «Արաբկիր»	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը													Ձյան ծածկույթը		
	Ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան «Արաբկիր»	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			

Աղյուսակ 6. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղությունների Միջին արագություն, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0.9	2.0
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9			
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2.1	
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5			
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4	
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6			
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8	
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0			

5.3 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը համաձայն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզում:

Նախագծային աշխատանքների ժամանակ պետք է հաշվի առնվի սեյսմիկ վտանգի գործոնը, որը ըստ Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի՝ ՀՀԸՆ 20.04.2020թ. տեղամասը գտնվում է II սեյսմիկ գոտու մեջ՝ Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝ A, ազատ անկման g արագացման մասերով՝ Amax=0.4g և ունի 8-9 բալ սեյսմիկայնություն:

5.4 Մթնոլորտային օդ

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2022 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: 2022 թվականի 4-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու և ծծմբի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Ազոտի երկօքսիդների ամսական միջին կոնցենտրացիան նոյեմբեր և դեկտեմբեր ամսիներին գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1 անգամ, իսկ հոկտեմբեր ամսին միջին ամսական կոնցենտրացիաները մոտ են եղել ՍԹԿ-ին:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը







Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)

0.01
0.03
0.04
0.05
0.06
0.08

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը





Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)



5.5 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդանի Ջրավազանային Կառավարման Տարածքը (ՋԿՏ) ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը: 2021 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 30%-ում՝ 3-րդ դաս, 15%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2021թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել:

Հրազդան գետի Երևանի հատվածում՝ Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Արգել գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև պայմանավորված վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական


N
Հրազդան
Աշտարակ
Եղվարդ
Արուճ
Ծաղկաձոր
Սևան
Ապարան
Վարդենիս
Գեղամավան
Գագարին
Ոսկեվանք
Ամբերդ
Աղարակ
Օշական
Ակունք
Գառնի
Գեղարդ
Գեղակերտ
Վաղաշատ
Ներքին Գեղի
Նոր Գեղի
Բյուրեղավան
Ալապարս
Չարենցավան
Արզական
Մրգաշեն
Ոռնեկ
Ներքին Սասնաշեն
Նոր Սասնաշեն
Ներքին Սասնաշեն
Նոր Խարբերդ
Ներքին Խարբերդ
Դիմիտրով
Մարմարաշեն
Գետաշեն
Գեղարքունիք
Գեղամա լեռներ
Սևանա լիճ
Ելեզ
Գեղամա լեռներ
Սևանի ազգային պարկ
Սևանի թերակղզի
Սևանի ազգային պարկ
Սևանի թերակղզի
Ծաղկաձոր
Հրազդան
Գեղամա լեռներ
Գեղարքունիք
Գեղամա լեռներ
Գեղարքունիք
Գեղամա լեռներ
Գեղարքունիք

5.6 Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավազոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող ոչ պիտանի հողային հանույթը կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, որտեղից էլ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված/համաձայնեցված վայր:

5.7 Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի խառը կառուցապատման գոտում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

Ստորև բերված է Երևան քաղաքի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:

5.8.1 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման ջրի առկայության պայմաններում:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Պետք է նշել, որ գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված /կառուցապատված են և օգտագործվում են մարդու կողմից:

5.8.2. Կենդանական աշխարհ

Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրագույն առնետները, տնային մուկը:
Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:
Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ:
Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարառոտ սցինկը, օձերից՝ կույր օձուկը:

Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակներ և բուսատեսակներ, ինչպես նաև ՀՀ կարմիր գրքում բուսատեսակներ և կենդանատեսակներ բացակայում է:

5.8.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

Երևան քաղաքում ներկայումս գործում է Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը, որոնք ծրագրի իրականացման տրածքից գտնվում են մի քանի կիլոմետր հեռավորության վրա:

5.8 Պատմության և մշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման (15.03.2007թ. N 385-Ն) **Աղյուսակ 7-ում** ներկայացված է ՀՀ Երևան

քաղաքի Կենտրոն վարչական շրջանի օտարման ոչ ենթակա պատմության և մշակութային հուշարձանների ցանկը:

Համաձայն ՀՀ Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման (07.10.2004թ. N 1616-Ն) **Աղյուսակ 8-ում** ներկայացված է ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի տարածքում առկա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Աղյուսակ 7.

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)		Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (հանրապետական, տեղական)	Ծանոթագրություն[2]
1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ «ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ»	Ք.ա. 2-1 հազ.,	Հրազդան գետի աջ ափին, «Ծիծեռնակա-բերդ»	Հ	14
2			ԱՐՎԵՍՏԱՆՈՑ -	1975 թ.	Նալբանդյան փող. 29	Տ	9
3			ԱՐՎԵՍՏԱՆՈՑ -	1980 թ.	Յ. Զարոբյան փող. 5	Տ	10
4			ԲԱՐՁՐԱՔԱՆԴԱԿ	1938 թ.	Աբովյան պուրակ	Տ	12
5			ԳԵՐԵԶՄԱՆ ՍԻՄՈՆ	1957 թ.	Մովսես Խորենացու,	Տ	63
6			ԳԵՐԵԶՄԱՆ	1921 թ.	Մովսես Խորենացու և	Տ	64
7			ԳԵՐԵԶՄԱՆ ԼԻՊԱՐԻՏ	1921թ.,	Մովսես Խորենացու և	Տ	65
8			ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԵՆՔ.	1928 -1940	Տերյան փող. 72	Հ	66
9			ԴԱՄԲԱՐԱՆ	1319 թ.	Աբովյան փող. 3, «Սթար	Հ	68
10			ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐ	Ք.ա. 5-3 հազ.	Ալեք Մանուկյան փող. 1,	Հ	90.1
11			ԽԱՉՔԱՐ ԱՐՑԱԽՈՒՄ	1996 թ.	Ալեք Մանուկյան փող. 1,	Տ	90.3
12			ԽԱՉՔԱՐ ՍՈՒՔԻԱՍԻ	1586 թ.	Ծովակալ Իսակովի պող. 3,	Տ	32.1.1
13			ԿԱՄՈՒՐՋ «ԿԱՐՄԻՐ»	1679 թ.	Հրազդան գետի վրա,	Հ	84
14			ԿԱՄՈՒՐՋ	1939-1961	Հրազդան գետի վրա	Հ	85
15			ԿԱՄՈՒՐՋ ՆՈՐՔԻ	1664 թ.	Մյասնիկյան պող.	Հ	86
16			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ	1965 թ.	Տերյան փող. 62	Տ	60.1
17			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ՀՐԱՉՅԱ	1982 թ.	Մ. Մաշտոցի պող. 45	Տ	104
18			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ	1982 թ.	Պարոնյան փող. 1,	Տ	103
19			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԱԿՍԵԼ	1970 թ.	Նալբանդյան փող. 96	Տ	52.1

[2] Սույն ցուցակի ծանոթագրության սյունակում (թիվ 8) տրվում են 4-րդ սյունակում ներկայացված հուշարձանների և ենթահուշարձանների համարները պետական ցուցակի (կրճատ՝ պետ. ցուցակ) համաձայն: Անհրաժեշտության դեպքում ներկայացվում է նաև լրացուցիչ տեղեկատվություն հուշարձանի առանձին հատկանիշների (տեղ, վիճակ, բնութագրական օբյեկտների առկայություն և այլն) վերաբերյալ: Ցուցակը օտարման ոչ ենթակա այլ ենթահուշարձանների (խաչքար, տապանաքար և այլն) անվանումներով չծանրաբեռնելու նպատակով ծանոթագրության մեջ ներկայացվում են նաև դրանց քանակական տվյալները և պետական ցուցակի ենթահամարները:

20			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ՀԱՅԿ	1975 թ.	Մ. Մաշտոցի պող. 9 շենքի	Տ	39.1
21			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԹՈՐՈՍ	1985 թ.	Պուշկինի փող. 31, բնակելի	Տ	105
22			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ	1996 թ.	Մարշալ Բաղրամյան պող.,		38.1
23			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ՀԱՅ	1968 թ.	Աբովյան 32,	Տ	19.1
24			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ	1974 թ.	Մ. Մաշտոցի պող. 9 շենքի	Տ	39.2
25			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ՀԱԿՈԲ	1965 թ.	Տերյան փող. 62	Տ	60.2
26			ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ ՄԵԾ	1967 թ.	«Ծիծեռնակաբերդ»	Հ	106
	26.1		Թանգարան Հայոց	1995 թ.		Հ	106.11
27			ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ	1964 թ.	Օղակաձև զբոսայգի	Տ	107
28			ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ	1985 թ.	Տերյան փող. 74,	Տ	2.1
29			ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ	1979 թ.	Ալեք Մանուկյան փող. 1,	Տ	90.4
30			ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ	1981 թ.	Տերյան փող. 105,	Տ	88.4
31			ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ ՄԵԾ	1990 թ.	Կորյունի փող. 15	Տ	108
32			ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ	1963 թ.	Մ. Մաշտոցի պող. 46, թիվ 2	Տ	110
33			ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐՆԵՐ	1949 թ.	Խ. Աբովյանի անվան	Տ	109
34			ՀՈՒՇԱՍԱԼ ԵՐԿՐՈՐԴ	1985 թ.	Օղակաձև զբոսայգում,	Տ	111
35			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1950 թ.	Աբովյան փող.	Հ	112
36			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1955 թ.	Խանջյան փող. 5, Պետական	Տ	113
37			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀՐԱՉՅԱ	1970 թ.	Կորյունի փող. 2 ա, դպրոցի	Տ	69.1
38			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1956 թ.	Գրքի պալատի բակում		67.1
39			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1967 թ.	Օղակաձև զբոսայգում	Տ	114
40			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՎԱԼԵՐԻ	1966 թ.	Թումանյան փող. 42, Ռուսաց	Տ	115
41			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄԱՔՍԻՄ	1967 թ.	Ալեք Մանուկյան փող. 3, թիվ	Տ	116
42			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1973 թ.	Օղակաձև զբոսայգում	Հ	117
43			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԼԵՈՆԻԴ	1995 թ.	Ագաթանգեղոսի փող. 1,	Տ	118
44			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1972 թ.	Կորյունի փող. 2	Տ	89.3
45			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1970 թ.	Մ. Մաշտոցի և Մարշալ	Տ	119
46			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1974 թ.	Թամանյան-Մոսկովյան	Հ	120
47			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՎԵՏԻՔ	1965 թ.	Օղակաձև զբոսայգում	Հ	121
48			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՍՏԵՓԱՆ	1982 թ.	Տիգրան Մեծի պող. 38, թիվ	Տ	122
49			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՂԱՍԻ	1987 թ.	Տիգրան Մեծի պող. 26 ա,	Տ	123
50			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄՈՎՍԵՍ	1996 թ.	Ալեք Մանուկյան փող. 1,	Տ	90.5
51			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1988 թ.	Սայաթ-Նովայի պող. 1 ա,	Հ	124
52			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԿԱՐՈ	1997 թ.	Օղակաձև զբոսայգում	Տ	125
53			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱԿՈԲ	1987 թ.	Գրքի պալատի առջև՝	Հ	67.2
54			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1940 թ.	Մովսես Խորենացու, Գրիգոր	Տ	126

55			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1950 թ.	Ծովակալ Իսակովի պող.	Տ	127
56			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1960 թ.	Հանրապետության և Ստ.	Տ	128
57			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1974 թ.	Գրիգոր Լուսավորչի փող. 27,	Տ	130
58			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1980 թ.	Գրիգոր Լուսավորչի և	Հ	131
59			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1956 թ.	Տերյան փող. 2, թիվ 25	Տ	132
60			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄԻՔԱՅԵԼ	1965 թ.	Օղակաձև զբոսայգում	Հ	133
61			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄԻՔԱՅԵԼ	1985 թ.	Նար-Դոսի փող. 38, թիվ 33	Տ	134
62			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՆԱՐ -	1956 թ.	Հովհ. Քաջազնունու փող.	Տ	135
63			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՍՏԵՓԱՆ	1931 թ.	նույնանուն հրապարակում	Հ	101
64			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՍՏԵՓԱՆ	1957 թ.	Մ. Մաշտոցի պող. 33, թիվ 1	Տ	70.1
65			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1965 թ.	Վարդանանց փող. 30, թիվ	Տ	136
66			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՂԻՇԵ	1957 թ.	Ամիրյան փող. 9, դպրոցի	Տ	71.1
67			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՂԻՇԵ	1985 թ.	Օղակաձև զբոսայգում	Հ	137
68			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՆՏՈՆ	1959 թ.	Մարշալ Բաղրամյան պող.	Տ	138
69			ՀՈՒՇԱՐՁԱՆ «ՊԵՊՈ»	1976 թ.	Մովսես Խորենացու և	Տ	139
70			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՏԻԳՐԱՆ	1989 թ.	Խանջյան փող. 50,	Տ	151.1
71			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1949 թ.	Մոսկովյան փող. 17, թիվ 8	Տ	140
72			ՀՈՒՇԱՐՁԱՆ	1986 թ.	Մ. Մաշտոցի և Մարշալ	Հ	141
73			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՆԵԼՍՈՆ	1950 թ.	Մովսես Խորենացու, Գրիգոր	Տ	142
74			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԳԱԲՐԻԵԼ	1972 թ.	Գր. Լուսավորչի փող. 6,		78.3
75			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՎԱՂԱՐՇ	1983 թ.	Ծովակալ Իսակովի պող. 2,	Տ	143
76			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՎԱՐԴԱՆ	1975 թ.	Օղակաձև զբոսայգում	Հ	129
77			ՀՈՒՇԱՐՁԱՆ ՎԱՀԱՆ	1999 թ.	Օղակաձև զբոսայգում	Հ	144
78			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՐՄԵՆ	1987 թ.	Օղակաձև զբոսայգում	Հ	145
79			ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ	1916 թ.	Աբովյան փող. 2	Հ	96.2
80			ՇԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ	1941 թ.	Աբովյան փող. 64	Տ	77
81			ՇԵՆՔ Մ. ՄԱՇՏՈՑԻ	1957 թ.	Մեսրոպ Մաշտոցի պող. 53	Հ	81: Ենթակայությամբ
	81.1		Բացօթյա ցուցադրություն		շենքի կամարակապ	Հ	81.10: Ենթակայու-
82			ՁՐԱՆՑՈՒՅՑ	1950 թ.	Հրազդան գետի վրա,		156
83			ՁՐԱՆՑՔ ՄԱՄՈՒ	Ք.ա. 7 դ.,	Կոնդ թաղամասում,	Հ	157
84			ՎԻՇԱՊԱՔԱՐ	Ք.ա. 3-2 հազ.	Օղակաձև զբոսայգում, «Ալ	Հ	169
85			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1977 թ.	Աբովյան 29 բնակելի շենքի	Տ	17.1
	85.1		Հուշակոթող Դերենիկ	1977 թ.		Տ	17.2
86			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1949 -1953	Մոսկովյան փող. 40	Հ	170
87			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1946 թ.,	Յ. Զարոբյան փող. 20	Հ	171
88			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1980 թ.	Յ. Զարոբյան փող. 3	Հ	172

89			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1936 թ.,	Պուշկինի փող. 62/7	Հ	173
	89.1		Խաչքար Ասլիզատի	1601 թ.	թանգարանի բակում	Հ	173.1
	89.2		Հուշակոթող Հակոբ	1981 թ.		Հ	173.2
90			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1967 թ.	Նալբանդյան փող. 21 շենքի	Տ	46.2
	90.1		Հուշակոթող Ալեքսանդր	1979 թ.	Նալբանդյան փող. 21 շենքի	Տ	46.1
91			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1984 թ.	Մ. Մաշտոցի պող. 39 շենքի	Հ	41.1
92			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1935 թ.,	Մեսրոպ Մաշտոցի պող. 17	Հ	174
93			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1935 թ.,	Սարյան փող. 3	Հ	175
94			ՏՈՒՆ - ԹԱՆԳԱՐԱՆ	1991 թ.	Ջորագյուղ ազգագրական	Հ	176
95			ՔԱՆԴԱԿ	1984 թ.	Պարոնյան փող. 40, «Դվին»	Տ	207
96			ՔԱՆԴԱԿ «ՁՐԱՎԱՃԱՌ	1970 թ.	Մովսես Խորենացու և	Տ	208
97			ՔԱՆԴԱԿ «ՎԱՆԵՑԻ	1975 թ.	Աբովյան և Սայաթ-Նովայի	Տ	209
98			ՔԱՆԴԱԿ	1985 թ.	Օղակաձև զբոսայգում	Տ	210
99			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	քարի դար,	Հրազդանի ձախ ափին,	Հ	211
100			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	չորրորդական	Հրազդանի ձախ ափին,	Հ	212
101			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	Ք.ա. 20-16	Հրազդանի ձախ ափին,	Հ	213
102			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	Ք.ա. 20-16	Հրազդանի աջ ափին,	Հ	214
103			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	Ք.ա. 20-16	Հրազդանի աջ ափին,	Հ	215
104			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	ուշ	սբ Սարգիս եկեղեցուց ներքև,	Հ	216
105			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	ուշ	Մանկական երկաթուղու	Հ	217
106			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	16-18 դդ.	«Հրազդան» մարզադաշտի	Հ	218
107			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	միջին քարի	Նորագյուղ թաղամասում,	Հ	219
108			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	քարի դար,	Նորագյուղ թաղամասում,	Հ	220
109			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	միջին քարի	Նորագյուղ թաղամասում,	Հ	221
110			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	16-17 դդ.	ԵրՀԷԿ-ի դիմաց	Հ	222
111			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	16-17 դդ.	ԵրՀԷԿ-ի դիմաց	Հ	223
112			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	14-16 դդ.	Նորագյուղ թաղամասում,	Հ	224
113			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	14-16 դդ.	Նորագյուղ թաղամասում,	Հ	225

Աղյուսակ 8.

Հուշարձանի համար	Հուշարձանի Ենթահամարը			Հուշարձանախումբը հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ	Նշանակությունը, հանրապետական/տեղական	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7	8	9
90.				ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇԵՆՔ. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ	1965 թ. •	Ալեք Մանուկյան փող. 1	Հ	Ճարտ.՝ է. Տիգրանյան
	90.1.			ժայռապատկերներ	մթա 5-3 հզմ		Հ	Համալսարանի բակում
	90.3.			խաչքար՝ Արցախում զոհված մտավորականների և ԵՊՀ ուսանող-ազատամարտիկների	1996 թ.		Տ	Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքի առջև Քանդ.՝ Ժ. Սուքիասյան
	90.4.			հուշաղբյուր՝ երկրորդ աշխարհամարտում զոհված համալսարանականներին	1979 թ.		Տ	Ճարտ.՝ Ռ. Զուլհակյան
	90.5.			հուշարձան՝ Մովսես Խորենացու	1996 թ.		Տ	Համալսարանի բակում Քանդ.՝ Ա. Պողոսյան

*Հուշարձանների պետական ցուցակը կազմելիս հիմք է ընդունվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կառուցվածքը մարզի և բնակավայրերի նույն համարակալմամբ:

5.9 Սոցիալ տնտեսական պայմանները

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին: Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն Հայաստանի Հանրապետության ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում Ազգային ժողովն ու կառավարությունը, Հայաստանի Հանրապետության բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատահիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը և այլն: Մայրաքաղաքում գործում են Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2021թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- ➢ արդյունաբերություն՝ 34.0 %,
- ➢ շինարարություն՝ 42.9 %,
- ➢ մանրածախ առևտուր՝ 69.7 %,
- ➢ ծառայություններ՝ 86.8 %:

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը:

Աղյուսակ 9. Երևան քաղաքի բնութագրերը

Տարածքը	223 քառ. կմ
ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
Վարչական շրջաններ	12
Բնակչության թվաքանակը 2022թ. տարեսկզբի դրությամբ	1 092.8 հազար մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2021թ., %	36.9
Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 323.2 հա
այդ թվում՝ վարելահողեր	910.6 հա

6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1 Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականցման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի անբարենպաստ ազդեցություններ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ, կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի վերակառուցումն իրականացվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան,

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Բակային տարածքի վերակառուցման շինարարության ընթացքում,
- Փորման ընթացքում,
- Դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- Շինհրապարակների տեղադրման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից պատճառվող անհանգստությամբ
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումների ծրագիր, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

6.2 Օդի աղտոտում

Վերակառուցման աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են շինարարական տեխնիկայի աշխատանքի դեպքում:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների

իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի՝

- շինհրապարակի պարբերաբար ջրցանում,
- սորուն շինարարական նյութեր տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում,
- շինարարական աղբի տեղափոխման համար օգտագործվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներ,
- շին հրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում տարվա չոր եղանակային պայմանների դեպքում,
- շինհրապարակում սորուն նյութերը պահեստավորվելու են շինանյութի համար նախատեսված ժամանակավոր պահեստներում կամ ծածկվելու են անջրթափանց պոլիէթելենային թաղանթով,
- շինհրապարակը առանձնացվելու է մետաղաթիթեղյա ցանկապատով կամ հատուկ մեկուսիչ թաղանթով,
- շինարարական հրապարակում նախատեսվելու է թափոնների ժամանակավոր կուտակման վայրեր,
- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների շահագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:
- Բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածույթան լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

6.3 Հողերի Աղտոտում

Գործունեության ենթակա տարածքը խառը կառուցապատման գոտում գտնվող տարածք է, ռելիեֆը հիմնականում հարթ է:

Հողային զանգվածն առաջանալու է փորման աշխատանքներից:

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտի տեղափոխում հատուկ այդ նպատակի համար հատկացված/համաձայնեցված վայր
- շինարարական հրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ անջրթափանց հիմքով բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը իրականացվելու է տարածքից դուրս՝ վառելիքի լիցքավորման և տեխնիկական սպասարկման կայաններում:
- Հողի բերրի շերտի պահեստավորումն ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան,
- մինչ հողի բերրի շերտի ժամանակավոր պահեստավորումը՝ պահեստավորման տարածքի նշահարում,
- առկա քարերից տարածքի մաքրում ՝ հողի բերրի շերտի հետ դրանց խառնումը կանխելու համար:
- Հողի բերրի շերտի պահեստավորումը կույտերով և կույտերի ծածկում ծածկոցներով՝ հողի էրոզիան կանխելու համար:

6.4 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերով: Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, սակայն հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի, այլ հասարակական շենքերի հարևանությամբ;
- Աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, ինչպես նաև համալսարանում իրականացվող դասապրոցեսից դուրս ժամերի ընթացքում՝ չխոչընդոտելով համալսարանում դասերի բնականոն ընթացքին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;

6.5 Արտակարգ իրավիճակներ.

Վերակառուցման աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ:

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- Փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,
- տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է նախագծողի, շինարարի և վերահսկողի վերաբերյալ տեղեկատվություն (անվանում, կոնտակտային տվյալներ և այլն), շինթույլտվության, շինարարությոան սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:
- շինհրապարակը կազմակերպվելու է հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան,
- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,
- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրվելու են հրդեհավտանգ և պայթունավտանգ թափոններից և աղբից,
- հակահրդեհային միջտարածությունները չեն օգտագործվելու նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,
- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,
- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

6.6 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Վերակառուցվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են առանձնացված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի հնարավոր արտահոսքերը և արտանետումները դեպի մակերևութային և/կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ որակի ջրաքանակի ապահովումը նախատեսվում է իրականացնել մեքենաներով բերելու եղանակով՝ (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրամատակարար կազմակերպության հետ):

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղվելու են շինհրապարակում տեղադրված տարողության մեջ,
- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և տարողություններում հավաքված/ կուտակված ջուրը,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների ժամանակավոր կայանումը իրականացվելու է մակերևութային ջրային ռեսուրսներից հեռու
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով՝ բացառելով շինարարական հրապարակում բետոնի խառնուրդի/շաղախի պատրաստումը:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող ժամանակավոր բիոզուգարանից և դրանց

սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարական հրապարակում տեղադրված բիոզուգարանները շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Ջրօգտագործման հաշվարկային ծախսի վերաբերյալ առավել մանրամասն կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

6.7 Կենսաբազմազանություն

<u>Բուսական աշխարհ.</u> Շինարարական աշխատանքների ընթացքում բուսատեսակների և կենդանատեսակները վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատանքները տեղի են ունենալու քաղաքային ակտիվ միջավայրում:

<u>Կենդանական աշխարհ.</u> գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի արդեն իսկ կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

6.8 Թափոններ

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային և խառը շինարարական աղբը, ինչպես նաև շինարարական աշխատանքների համար ոչ պիտանի հողային գրունտները: Առաջացող շինարարական աղբը և ոչ պիտանի հողային գրունտները կտեղափոխվի համապատասխան հատկացված վայր:

Խառը Շինարարական թափոններ՝ 200.0 խմ /ծածկագիրը՝399013000105/

ՀՀ Երևան քաղաքապետարանի թիվ N 45/30825-22 գրության՝ **(Հավելված 5)** նախատեսված աշխատանքների ընթացքում առաջացած խառը շինարարական աղբը կտեղափոխվի տեղեկանքում նշված համապատասխան վայրը:

Քանդված հանված հողային զանգված՝365.04 խմ /ծածկագիրը՝31401100 08 99 5/ Քանդված հանված հողային զանգվածը համաձայն ՀՀ Երևան քաղաքապետարանի թիվ N 45/30825-22 գրության՝ **(Հավելված 5)** կտեղափոխվի հատկացված վայր:

ե) Կենցաղային աղբ (ծածկագիրը՝ 91200400 01 00 4) - կառաջանա 246.0 կգ ընդհանուր քանակությամբ՝ բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների կենցաղային սպասարկման, ինչպես նաև վարչական գործունեության արդյունքում: Այն նախատեսվում է կուտակել աղբամաններում և ըստ համապատասխան պայմանագրի տեղափոխել ՏԻՄ-երի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակը և հարակից տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,
- շինարարական հրապարակում առանձնացվել է շինարարական և կենցաղային աղբի նախնական կուտակման վայրը,
- շինարարական թափոնները հնարավորինս կտեսակավորվեն/կառանձնացվեն մետաղները, փայտերը և այն ամենը ինչը հնարավոր կլինի վերաօգտագործել շինարարական աշխատանքների ընթացքում և մնացած մասը կտեղափոխվի հատկացված վայր,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- բացառվելու է կենցաղային աղբի այրումը,
- շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումը դեպի հատկացված վայր կատարվելու է փակ ծածկ ունեցող բեռնատարներով,
- բացառվելու է աղբի նախնական կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում՝ տարածքից հեռացնելով բոլոր տեսակի շինարարական նյութերի մնացորդները:

Շինարարության, ինչպես նաև շահագործման փուլերում կենցաղային աղբի հեռացումը տարածքից իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

6.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Շինաշխատանքները իրականացվելու են համաձայն ՇՆԵԿ-3-480* նորմերի:

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը՝ շինհրապարակում պահպանվելու են անվտանգության տեխնիկայի կանոնները՝ անցումները և վտանգավոր գոտիներում իրականացվելու են լրացուցիչ պաշտպանիչ միջոցառումներ (մետաղական բազրիքների տեղադրում, ցանցապատում և այլն)
- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- ապահովվելու է աշխատողների անվտանգությունը բարձրության վրա աշխատելիս,
- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղերով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն),
- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),
- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ,
- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,
- վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,
- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- բացառվելու է ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,
- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին,
- տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,
- շինհրապարակի լուսավորությունը պետք է ապահովի հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,
- շինությունների ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարվելու են օդափոխության պայմաններում, կատարվելու են հոսանքատար մասերի մեկուսացում,
- վարվելու են տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար,
- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,
- պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, հակակովիդային միջոցառումների իրականացման տեսանկյունից:

6.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի վերակառուցման տարածքում առկա պատմության և մշակութային հուշարձանների ցանկը ներկայացված է սույն հաշվետվության Աղյուսակ 7-ում և Աղյուսակ 8 -ում:

Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին՝ տվյալ դեպքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

Աշխատանքները կշարունակվեն ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից համապատասխան հրահանգավորումներ ստանալուց հետո:

Կապալառուն պարտավոր է ծանոթ լինել ԿԳՄՍՆ -ի պատահական գյուտերի ընթացակարգին և պայմանգրով պետք է սահմանվի այդ ընթացակարգի խիստ հետևումը:

6.11 Սոցիալական ազդեցություններ

Վերակառուցման աշխատանքների ընթացքում առաջանում են փոշու և դիզելային վառելիքի այրման արգասիքներ, որոնգ վտանգ են ներկայացնում բնակչության առողջության համար: Այդ ընթացքում աղմուկի մակարդակի ավելացումը նույնպես բացասաբար կարող է անդրադառնալ բնակչության առողջության համար:

Եթևեկության ինտենսիվացումը հնարավոր անհարմարություններ կարող է ստեղծել հարակից փողոցների մոտակայքում գտնվող/բնակվող բնակչության, այնպես էլ գոյություն ունեցող ճանապարհով երթևեկության համար:

Վերոնշյալ անբարենպաստ ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ լինելու են տեղայնացված և համապատասխան կառավարման պլանով նախատեսված միջոցառումների պատշաճ իրականացման դեպքում հնարավոր կլինի նվազեցնել, կանխարգելել և/կամ մեղմացնել դրանք:

Միևնույն ժամանակ ակնկալվում է շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, որ դրական ազդեցությունները կլինեն ավելի շատ և երկարատև, օրինակ՝

- Շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ անձնակազմի զգալի մասը կհավաքագրվի տեղի բնակչությունից, ինչը դրական ազդեցություն կունենա բնակչության կենսամակարդակի վրա:
- Աշխատանքների ընթացքում կզարգանան տեղի ենթակառուցվածքները, կլուծվեն մի շարք սոցիալական խնդիրներ:
- Հարակից շենքերի բնակչությանը պարբերաբար տեղեկատվություն կտրամադրվի վերակառուցման աշխատանքների սկզբի, ընթացքի և ավարտի մասին:

6.12 Լանդշաֆտ

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ այն կառուցվելու է գոյություն ունեցող կառուցապատման տարածքում: Նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում (ազդեցության գոտում) լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

6.13 Բարեկարգում և Կանաչապատում.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի վերակառուցման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է իրականացնել կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքները կիրականացվեն Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ կանաչապատման և բարեկարգման պլաններին համապատասխան, ինչպես նաև «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 30.10.2008թ N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներին համապատասխան:

7 ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ/ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերվպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլի մասով, կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում:

Բնապահպանական կառավարման պլանը, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

8 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի Գործողու-թյունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխա-նատուն	Մոնիթորինգի պատասխա-նատուն
Նախագծային փաստաթղթերի պատրաստում	Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,	Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում: - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների/համաձայնությունների ձեռք բերում - Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ
Շինարարական Հրապարակի Բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի բնապահպանական Պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:	Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/սոցիալական, աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով պատասխանատու կլինի շինհրապարակում իրականացվող աշխատանքների բնապահապանական, սոցիալական, աշխատանքի անվտանգության պահանջների իրականացման համար:	«ԵՊՀ» Հիմնադրամ	
Աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն		- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: - Շինարարական աշխատանքներում ներգրավված բոլոր մարդիկ պարտադիր կանցնեն բնապահպանական, սոցիալական, առողջությանև անվտանգության վերաբերյալ	Շինարարության կապալառու	

		դաընթացներ, կստանան համապատասխան հրահանգավորում: - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:		
Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ Այլ շինարարական աշխատանքներ	Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;	- Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերաբար ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով; - Շինարարական աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխման վայրեր կնախատեսվեն - Աշխատանքների ընթացքում կառաջանան քանդված հանված հողային զանգվածներ, որոնք անմիջապես կտեղափոխվեն համապատասխան հատկացված վայրեր և չեն առաջացնի կուտակումներ - Շինարարական հրապարակից դուրս գալիս նախատեսվում է ավտոտրասնպորտային միջոցների անվադողերի լվացում - Սորուն շինարարական նյութերի և քանդված հանված հողային զանգված տեղափոխումը պետք է իրականացնել փակ ծածակով մեքենաներով:	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող, Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ

		- Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի		
Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր Նյութերի արտահոսքի պատճառով Հնարավոր է վտանգավոր նյութերի Թափանցում հողի մեջ:	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված վայրեր: - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Բացառել աղբի այրումը շինարարական հրապարակներում կամ դրա հարակից վայրերում	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող, Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ
Ջրային ռեսուրսների պահպանություն	Մակերևութային հոսքերի աղտոտում	- Մինչև աշխատանքների սկիզբը կատարել միացումներ քաղաքային ջրատարին և կոյուղուն	Շինարարության կապալառու	Երևանի քաղաքապետարան
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;	Շինարարության կապալառու	Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ

		- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;		
Շինհրապարակի վերականգնում		- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - Մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - Մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները; - Կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն կանաչապատման նախագծի բարեկարգման պլանների; Ձեռնարկել տնկված ծառերի, թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր կպչողականություն աճն ապահովելու համար	Շինարարության կապալառու	Երևանի քաղաքապետարան

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտ 1,5%

9 ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ո՞վ է իրակա-նացնում մոնիթո-րինգը)
Շինանյութերի մատակարա-ռում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու «ԵՊՀ» Հիմնադրամ
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս Երևան քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ՝ (Հետևել, որպեսզի շինարարական հրապարակում չիրականացվի Մեքենաների և տեխնիկայի լվացում, ինչպես նաև տեխնիկական	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ

		միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը)			
Հողային աշխատանքներ	- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	«ԵՊՀ» Հիմնադրամ Կապալառու քաղաքապե-տարան
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Վառելիքի, յուղերի և այլ Թունավոր նյութերի Պատահական կամ Մշտապես տեղի ունեցող Արտահոսքեր	Շինհրապարակ	Շինհրապարակի զննում	Շինարարության ընթացքում	Կապալառու Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ
Շինարարական հրապարակի բարեկարգում	Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի /բետոնախառնիչի/ ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում	Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	Կապալառու Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ
Աշխատանքի անվտան-գություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ

	- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն				
Շինհրապարա-կի վերականգ-նում, կանաչա-պատում և տարածքի բարե-կարգում	- Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են - բոլոր մակերեսները, այդ թվում ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են - շինհրապարակի տարածքը բարեկարգված և կանաչապատված է, ապահովված է ծառերի թփերի և այլ բուսականության նորմա; աճը	Տեղամասեր Կատարած Ստուգայցեր Կանաչապատվող բոլոր տեղամասերը	Շինհրապարակի զննում Ստուգայցեր	Շինարարության ավարտին Շինարարության ավարտից սկսած մինչև ծառերի աճի կպչողականության ապահովումը	Կապալառու Երևանի քաղաքապետարան «ԵՊՀ» Հիմնադրամ

10 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայարի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- Շինարարական Կլիմայաբանութուն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/:
- «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՍՄԻԿ ՎՏԱՆԳԻ ՔԱՐՏԵԶԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՍՄԻԿ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶԸ ԵՎ ԸՍՏ ՍԵՅՍՄԻԿ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1261-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
- ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի եվ հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի եվ շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուն հավանություն տալու մասին»
- ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում
- СниП IV – 2 – 82 “Сборник. Земляные работы”
- ՀՀՇՆ 1 – 2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար:
- www.armstat.am
- www.arlis.am
- www.yerevan.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ընդհանուր տարածք՝	8՝281 քմ
Ասֆալտապատ մակերես՝	3՝118 քմ
Սալիկապատ մակերես՝	344 քմ
Ջրաթափանց մակերես՝	3՝822 քմ
Շատրվան՝	225 քմ

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

1. ԵՊՀ գլխավոր մասնաշենք
2. Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի արձան
3. Մովսես Խորենացու արձան
4. Անանիա Շիրակացու արձան
5. Ջրավազան
6. Դրոշներ
7. Պոմպակայան
8. Ծխատար

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԵՊՀ մասնաշենքեր
- Կանաչապատում
- Սալարկված մայթ
- Ասֆալտապատ հետիոտն մաս
- Փողոց
- Հետիոտնային անցում
- Ջրավազան
- Հուշարձաններ
- Նստարաններ
- Ցայտաղբյուրներ
- Լուսատուներ

Իրավիճակային հատակագիծ
Մ 1:500

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ընդհանուր տարածք՝	**8՝281 քմ**	
Սպարկված մակերես՝	**3՝691 քմ**	**44.6 %**
որից՝		
Չոր շատրվան՝	225 քմ	2.7%
Ջրաթափանց մակերես՝	**3՝803 քմ**	**46.0 %**
որից՝		
Կանաչապատ մակերես՝	2՝927 քմ	35.3%
Խճապատ մակերես՝	876 քմ	10.6%
Մուտքեր, աստիճաններ և թեքահարթակներ և այլն՝ 787 քմ		**9.5 %**
Ծառերի քանակ՝ (ավելացվել է 32 հատ ծառ)	205 հատ	

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

1. ԵՊՀ գլխավոր մասնաշենք
2. Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի արձան
3. Մովսես Խորենացու արձան
4. Անանիա Միրակացի արձան
5. Չոր շատրվան
6. Թեքահարթակ
7. Աստիճան թեքահարթակով
8. Փայտյա հարթակներ
9. Դրոշների հենաձողեր
10. Վերելակ
11. Հեծանիվների կայանատեղի
12. Պոմպակայան
13. Ոռոգման ստորգետնյա համակարգերի ուրվագիծ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԵՊՀ մասնաշենքեր
- Սպարկում
- Կանաչապատում
- Ջրաթափանց մակերես
- Չոր շատրվան
- Աղբաման
- Լուսատուներ

Գլխավոր հատակագիծ
Մ 1:500

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 01/13-07/2-01/128946-1020 «21» «11» 2022թ.

Օբյեկտ *Բակային տարածքի վերակառուցման (բարձր ռիսկայնության օբյեկտ, IV կատեգորիա)*
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))

Մեկ փուլով՝ «Աշխատանքային նախագիծ» կամ երկու փուլով՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» նախագծային փաստաթղթերի մշակման համար
(նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *Կենտրոն վարչական շրջան, Ա. Մանուկյան փող. թիվ 1*
(վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող *«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀՄԴ)*
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը *«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 14.09.2022թ. հ.01/1320-22 գրությունը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալի 07.10.2022թ. գրությունը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.03.2009թ. հ.2578314 վկայականը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտամեթոդական խորհրդի 2022թ. սեպտեմբերի 16-ին ժամը 14.00-ին կայացած 6-րդ նիստի արձանագրությունը և էսքիզային նախագիծը:*
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է *Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց (մշտական) օգտագործման*
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը *5.983152 հա:*
(հողամասի սահմանները՝ կորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը *Համալսարանի մասնաշենքերով ծանրաբեռնված հողամաս:*
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները *Ա. Մանուկյան և Զարենցի փողոցներ:*
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության հասանելիություն) *Կից գործող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:*
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր *Ա. Մանուկյան և Զարենցի փողոցներ, համալսարանական մասնաշենքեր:*
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) *ՀՀ կառավարության 07.10.2004թ. N1616-Ն որոշմամբ հաստատված, հանրապետական նշանակության հուշարձանի (դասիչ՝ 90)՝ Երևանի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքի, պահպանության գոտի:*
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ ------
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ *Մշակել Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքին հարող բակային տարածքի վերակառուցման նախագիծ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.03.2009թ. հ.2578314 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում:*
(ելնելով ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքներ, արտաքին դռներ, պատուհանների հատվածությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) ------

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) ------

9.3.թույլատրելի բարձրությունը (մետր) ------

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) ------

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անշրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) *Համաձայն նորմատիվային պահանջների:*

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) *Համաձայն նորմատիվային պահանջների:*

9.7. այլ պահանջներ
- *Նախագծով ապահովել հարակից տարածքների շահագործման նորմատիվային պահանջները:*
- *Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:*
- *Նախագծով հնարավոր է նախատեսել նոր նստարանների տեղադրում, սալիկապատում և եզրաքարերի փոխարինում, ջրավազանի վերակառուցում, ինչպես նաև արտաքին լուսավորության լուսատուների փոփոխում:*
- *Նախագծով բացառել հիմնական կառույցների իրականացումը:*
- *Գլխավոր ճակատի աստիճանների աջակողմյան հատվածում հնարավոր է նախատեսել վերելակ՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի սպասարկման համար:*
- *Բարեկարգման արդյունքում հնարավորինս բացառել կանաչապատ տարածքների կրճատումը:*
- *Շինարարական հրապարակի կազմակերպման նախագծում անհրաժեշտ է ներառել գեոդեզիական մանրամասն հանույթ՝ նշելով քննարկվող տարածքում և դրան հարկից պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում և հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում առկա առանձին կանգնած ծառերի և թփերի տեղադիրքը:*

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը	-------
11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	-------
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	*Միացնել գործող ինժեներական ցանցին, անհրաժեշտության դեպքում համաձայնեցնել մասնագիտացված կազմակերպությունների հետ:*
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	------- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	------- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	------- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	------- (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	-------
12.6. աղբահանություն	-------
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	*Կազմակերպել ջրահեռացում:* (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	*Մշակել փարածքի բարեկարգման, կանաչապատման և ուղղաձիգ հատակագծման նախագիծ, հնարավոր է նախատեսել ճարտարապետական փոքր ձևեր:* (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում. ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գոմաղց և այլն)
15. Շինարարական նյութեր	*Երկաթբետոն (հիմնային աշխատանքների համար), սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր:* (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	------- (արտակարգ իրավիճակներում մարդկանց, օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	*Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները:* (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	*Նախատեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան:*
19. Շրջակա միջավայրի պահպանում	• *Նախատեսել շրջակա միջավայրը վնասակար ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ:* • *Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և տեխնածին ծագման գործոններին սանիտարական կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները:* (շրջակա միջավայրը վնասակար ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	*Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:*

111. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը տրվում է 2 տարի ժամկետով, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի ՍՆիՊ 1.04.03-85* (Հեռանկարների շենքերի և կառուցվածքների շինարարության տեղորության նորմերը) գերատեսչական ակտով սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն:

112. Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման և բարեկարգման աշխատանքների համար թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) տևողության նորմերով հաշվարկված ժամկետով:

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	*Երեք տարի:* (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	*ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման հավելված N2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն, այդ թվում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն:* (ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)
23. Միջանկյալ համաձայնեցում	• *ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ,* • *Էսքիզային նախագծի միջանկյալ համաձայնեցում Երևանի քաղաքապետարանի հետ,* • *ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ:* (իրավասու մարմնի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:
24. Հասարակական քննարկումներ	------- (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումներ	• *Երևանի քաղաքապետի հետ:* • *Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել փվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:* (նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	-------
27. Այլ պայմաններ	*Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:*

Երևանի քաղաքապետ՝
ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ստորագրություն
L. S.

Կատարող՝ Շ. Մալխասյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ է պետական սեփականություն
(սեփականության կամ օգտագործման) ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Կենտրոն համայնք, Վ. Սարոյան փող. թիվ 1.
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

ՆԿԱՏՄԱՄԲ

ՀՀ կառավարության 15.12.01թ N 1222 որոշման, Երևանի քաղաքապետի
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

23.02.02թ N 308, 04.02.05թ N 150-Ա որոշումների, հողատարածքի անհատական ՀԻՄԱՆ ՎՐԱ
օգտագործման 29.03.02թ N 376/1-9-Ա պայմանագրի, 18.02.05թ N 718-2005
գլխ. հարկահատվածի, ՀՀ ՅՊ նախարարության 06.03.02թ հաշվեկշռային արժեքի
հաստատման գրության, 06.06.07թ ՀՀ ատաղձագործների, գնա մ. Հ.

ԳՐԱՆՑՎԱԾ է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
3-4 ՄԱՏՅԱՆԻ 000227 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
ՂԵԿԱՎԱՐ Մ. Սարգսյան
(ստորագրությունը)

Կ.Տ.

«03» 03 2009թ.

2578314

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

(մասշտաբը)



Կատարող _____ Ռ. Բրգատյան
(ստորագրությունը)

ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-006-116-002

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ բնակավայրերի

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ տնտ. կառուցապատման գործունեության

ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) 5,983152

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ անհատական (մշտական) օգտագործման

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-006

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ հասարակական

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ կառուցապատման մասնաշենքեր

ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) 71603,0

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ պետական սեփականություն

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հ/Հ	ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ.)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ 23.11.07թ N 18-22485-1158 գործարարության թույլտվություն, 14.11.07թ N 50-05/2-21366-1166 եզրակացություն, 11.02.09թ N 02/19-Ա-286-53 գրանցման փաստաթղթեր ԱԿՏ-ի

Կատարողներ՝ Գ.Հովհաննիսյան
(ստորագրությունները)

Ռ. Սարգսյան

Ռ. Հովհաննիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 16.09.22 ԹՎԱԿԱՆԻ 6-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /ՔԱՂՎԱԾՔ/

Քաղվածք

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտամեթոդական խորհրդի 2022 թ. սեպտեմբերի 16-ին ժամը 14.00-ին կայացած 6-րդ նիստի արձանագրության

Նիստի նախագահ՝ Ա. Քոչարյան

Քարտուղար՝ Լ. Իգիթյան

Մասնակցում էին՝ Հ. Վանյան, Հ. Հովսեփյան, Կ. Այվազյան, Մ.Մինասյան, Ա. Գրիգորյան, Ա. Բադիշյան, Ա. Մանասյան, Գ. Գյուրջյան, Ա. Ղուլյան, Ա. Վարդանյան, Վ. Իսահակյան, Գ. Նալբանդյան

Հրավիրված էին՝ Ա. Թորոսյան, Լ. Վարդանյան, Ն. Կարինյան, Ա. Սարգսյան, Խ. Միքայելյան, Ֆ. Մարգարյան, Է. Հարությունյան, Կ. Մարտիրոսյան, Ս. Պետրոսյան, Ա. Մալխասյան, Ա. Մանուկյան

ՕՐԱԿԱՐԳ

3. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ալեք Մանուկյան փողոցի հ.1 հասցեում գտնվող Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի դիմացի այգու վերակառուցման էսքիզային նախագծի քննարկում:

Զեկ.՝ Ս. Պետրոսյան
Փորձ.՝ Ա. Ղուլյան

ԼՍԵՑԻՆ՝ *Ս. Պետրոսյանը ներկայացրեց հարցը* – Սա այս թեմայով արդեն երրորդ քննարկումն է: Քննարկում ենք Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի արձանի տեղադիրքի հետ կապված: ՊՄՀՊ վարչության առաջարկն այն էր, որ մենք մի քանի սցենարներ քննարկենք և ներկայացնենք, սակայն, ցավոք, պատվիրատուն առաջադրանքը փոխեց և նոր փաթեթը, որը ներկայացվել է, այն է, որ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի արձանը մնում է նույնությամբ, Մովսես Խորենացու արձանը մնում է նույն տեղում, տեղափոխվում է միայն Շիրակացու արձանը, որը տարվում է դեպի մեխանիկայի ֆակուլտետի մուտքի կողքը: Կանաչ տարածքներն ավելացվել են: Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի արձանի տակը ստեղծում ենք կանաչ տարածք, հուսով եմ հետագայում լանդշաֆտային լուծման ժամանակ թփեր կլինեն, որոնք կծածկեն պատվանդանը: Աստիճանների վրա մենք ծաղկամաններ էինք նախատեսել, որոնք հանովի-դնովի են: Կատարվել է հետազոտություն՝ թե արձանի որ բարձրությունն է ավելի ճիշտ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝

Ա. Գրիգորյան – Ջրավազանի հետ կապված մանրամասնեք:

Ճարտարապետ – Քանի որ ջրավազանը կար և չի օգտագործվում, մենք այն դարձրել ենք մակերևույթին հավասար և կոնցեպտը, որն ընդհանուր առմամբ այգու համար մշակվել է, այգին, որ չի օգտագործվում, վերածվում է պլազայի, որտեղ պահպանվում են բոլոր ծառերը, նաև ավելացվում են և հնարավորություն է ստեղծվում, որ ուսանողներն ազատ ժամանակն անցկացնեն նաև ծառերի տակ: Որպեսզի հնարավորություն ունենանք այստեղ մեծ հանրային միջոցառումներ անել, շատրվանները մտցվում են գետնի տակ, պահպանելով հուշը այդ շատրվանների, նույն չափերով, գետնին հավասար շատրվաններ են, որոնք կարող են աշխատեցվել, երբ որ միջոցառումներ չկան:

Փորձագետ – Դիտողություններ գրեթե չունեմ, միակ դիտողությունը վերաբերում էր արձանին, որը չի տեղափոխվում: Այդ ժամանակավոր դրված ծաղկամանները հակասում են դասական մտածողությանը, այսինքն սիմետրիան է, հանդիսավոր աստիճաններ են: Եթե դրվում են այդ ծաղկամանները, միգուցե սյուների ուղղությամբ դրվեն: Լանդշաֆտային ազատությունը և դասական ճարտարապետությունը հակասում են իրար, հուշարձանի կերպարին խանգարում են:

Ճարտարապետ – Ներկայացնեմ նաև արձանի տեղափոխման առաջարկները (ցուցադրվեց):

Հ. Վանյան – Հիմա մենք կարող ենք քննարկել, արձանը տեղում մնա, թե ոչ: Տեղափոխումը կառավարության որոշում է պահանջում: Հիմա մասնագիտական առումով քննարկենք՝ պետք է այն տեղափոխել, թե ոչ:

Ա. Գրիգորյան – Պատվանդանի հետ կապված նշեմ, որ այն սիմետրիկ է, երբ որ բերում ենք այդտեղ, ընկալման ուղղությունն առանցքում է և այդ աստիճանների եզրի երեք մեծ աստիճանները ծածկում են պատվանդանի աջ կողմի ստալակտիդները, այստեղ անհասկանալի մի բան կա, պատվանդանը դառնում է ոչ սիմետրիկ:

Մ. Մինասյան – Բացարձակ չենք շահի, իզուր տեղը փող ենք ծախսելու: Այն, ինչը մենք անում ենք, դրա վերադարձը չենք ստանում:

Ա. Մալխասյան – Մենք երկու տարբերակին էլ համաձայն ենք:

Հ. Հովսեփյան – Անցյալ անգամ, երբ քննարկում էինք արձանի տեղափոխման հարցը, նշում էիք, որ արձանի չափերն այնպիսին են, որ այն փոքր է նայվում: Հիմա որ տեղափոխում ենք ավելի բարձր կետ, արդյո՞ք բազմակի անգամ չի կրճատվելու այն:

Փորձագետ – Կարծիք կա, որ այն կամերային քանդակ է:

Մ. Մինասյան – Գտնում եմ ոչ նպատակահարմար: Այսօր յուրաքանչյուր դրամը չի կարելի նման բաների վրա ծախսել:

ՈՐՈՇՎԵՑ՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ալեք Մանուկյան փողոցի հ.1 հասցեում գտնվող Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի դիմացի այգու վերակառուցման էսքիզային նախագիծը համարել ընդունելի, Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց արձանի տեղափոխման նախնական առաջարկը 5 դեմ, 3 կողմ, 5 ձեռնպահ ձայներով մերժել:

Խորհրդի նախագահ՝ Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

Քարտուղար՝ Լ. ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 45/30825-22

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
(Հասցե՝ Ալեք Մանուկյան 1)

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Ի պատասխան Ձեր 22.02.2023թ. 01/299-23 դիմումի, տեղեկացնում եմ, որ Երևան քաղաքում շինարարական աշխատանքներից, բնակարանների վերանորոգումից, շենքերի վերակառուցումից և քանդումից առաջացած շինարարական թափոնները թույլատրվում է տեղափոխել Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի անօգտագործելի խորշերի տարածք և Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 4 հասցեին հարող աղբի տեղադրման վայր:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԱՐՍԵՆ ԿԱՐՈՅԱՆ**

X _____

Աղբահանության և սանմաքրման բաժին
Հեռ. 011-514-176

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Պ/Ն	Անվանում	Միավոր	Ծառերի քանակ Նոր	Հատվող	Բարձր. մմ
	Կուաածաղիկ Vinca	քմ	55	-	-
	Գիհի "Old Gold" Juniperus pfitzeriana	հատ	1	-	600-800
	Գիհի փռվող Juniperus pfitzeriana	հատ	1	-	600-800
	Գիհի դազախական Juniperus sabina	հատ	3	-	600-800
	Գիհի ցածրաաճ Juniperus communis	հատ	1	-	700-1'000
	Բաղեղ (այվի) Hedera helix	հատ	55	-	5գծմ/հատ
	Կուսախաղող եռածայր վիչի Parthenocissus veitchii	հատ	25	-	-

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Պ/Ն	Անվանում	Միավոր	Ծառերի քանակ Նոր	Հատվող	Բարձր. մմ
	Բարդի Populus	հատ	-	-	-
	Կեչի Betula pendula	հատ	3	-	2'000-2'500
	Ուռենի Salix babylonica	հատ	1	4	-
	Եղևնի արծաթափայլ Picea abies 'Compacta'	հատ	1	-	700-800
	Եղևնի գնդաձև Picea pungens globosa	հատ	1	-	600-800
	Կանաչ գաճաճ եղևնի Picea pungens	հատ	1	-	1'000-1'500
	Կենսածառ Thuja orientalis	հատ	-	12	-
	Հացենի Fraxinus excelsior	հատ	-	-	-
	Կոելրեյթերիա հուրանավոր Koelreuteria paniculata	հատ	-	-	-
	Ցիկասակ Koelreuteria paniculata	հատ	-	-	-
	Ալբիցիա Albizia julibrissin	հատ	-	-	-
	Կաղնի ամառային Quercus robur	հատ	-	1	-
	Սիրիական վարդ Hibiscus syriacus	հատ	-	-	-
	Հուդայածառ Cercis canadensis	հատ	-	-	-
	Մետասեքոյա Metasequoia glyptostroboides	հատ	-	-	-
	Բալենի Prunus cerasifera	հատ	1	-	2'000-2'500
	Ֆորզիցիա Forsythia	հատ	4	-	800-1'000
	Ընկուզենի Juglans regia	հատ	-	-	-
	Թթենի Morus alba	հատ	-	-	-
	Արքայանաբինք Diospyros lotus	հատ	-	-	-
	Խնձորենի Malus	հատ	1	-	2'000-2'500
	Ծիրանենի Prunus armeniaca	հատ	1	-	2'000-2'500
	Դրախտածառ Cotinus coggygria	հատ	1	-	2'000-2'500
	Թխկի սպիտակ Acer pseudoplatanus	հատ	-	1	-
	Նոճի մշտադալար Cupressus sempervirens	հատ	-	-	-
	Լորենի Tilia	հատ	-	-	-
	Թեղի Ulmus	հատ	-	-	-
	Հաղարջ Ribes	հատ	-	-	-
	Սոսի արևելյան Platanus x hispanica	հատ	1	-	2'000-2'500
	Սոճի լեռնային Մուգիս Pinus mugo mops	հատ	1	-	800-1'000
	Սոճի սովորական Pinus sylvestris	հատ	1	-	2'000-2'500
	Կատալպա Catalpa bignonioides	հատ	4	-	2'000-2'500
	Փշատենի Elaeagnus	հատ	1	-	2'000-2'500
	Ասպիրակ Spiraea	հատ	1	-	800-1'000
	Սակուրա ճապոնական Prunus serrulata Kanzan	հատ	1	-	2'000-2'500
	Գիհի վիրգինյան Juniperus virginiana	հատ	1	-	800-1'000
	Բալզամին Impatiens	հատ	260	-	200-250
	Սովորատար սիզամարգ	քմ	2'900	-	-

Կանաչապատման գլխավոր հատակագիծ
Մ 1:500